

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՆՈՐԻՑ ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Մ. Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

Բանասեր Ս. Շտիկյանը Ստեփան Ոսկանյանին նվիրված իր առաջին հոդվածը, որ տպագրել է ՀՍՍՀ ԳԱ «Լրաբերում» 1969 թ., այսպես է սկսել. «Արևմտահայ նշանավոր գրական-հասարակական գործիչ, հրապարակախոս Ստեփան Ոսկանյանի կյանքի ամենասկզբնական ժամանակաշրջանը (1825—1846 թթ.) անբավարար է լուսաբանված»¹։ Մի քիչ ավելի ուշ, արդեն «Պատմա-բանասիրական հանդեսում» տպագրած հոդվածը նույնպես սկսել է նույն ազդարարությամբ²։ Մոտ հինգ տարի անցնելուց հետո նույն հանդեսներում նա նորից միաժամանակ տպագրել է դարձյալ Ստեփան Ոսկանյանին նվիրված երկու հոդված, կրկին հայտնելով, որ Ստեփան Ոսկանյանի «կյանքը, և մանավանդ հասարակական գործունեությունը լի են իրենց պարզաբանմանն սպասող «սպիտակ կետերով» («Հանդես», 1974, № 1, էջ 133), որ նպատակ ունի լուսաբանել «Ոսկանյանի գրական-հասարակական գործունեության արշավույսը» («Լրաբեր», 1974, № 4, էջ 26)։

Այսպիսով, Ս. Շտիկյանը Ստեփան Ոսկանյանին նվիրված չորս հոդված է հրատարակել գիտական հանդեսներում, նույնքան էլ պարբերական մամուլում, հետապնդելով միևնույն նպատակը՝ գիտական շրջանառության մեջ դնել «նոր և հետաքրքրական բազմաթիվ փաստեր, որոնք նոր լույս են սփռում Ոսկանյանի կենսագրության և գրական գործունեության այս շրջանի վրա» («Լրաբեր», 1969, № 4, էջ 78)։

Ինչ խոսք, դա շնորհակալ նպատակ է։ Սակայն Ս. Շտիկյանը հաճախ թույլ է տալիս էական վրիպումներ ու շաղթաբույներ։

Իր առաջին հոդվածում հեղինակը, նպատակ դնելով լույս սփռել Ստ. Ոսկանյանի ինքնուրույն և թարգմանական ստեղծագործությունների հետ կապված «սպիտակ կետերին», հաջորդ հոդվածում արդեն խոստովանում է. «Հարցի ողջ բարդությունն այն է, որ պարբերականներում տպագրված նրա գործերի գերակշիռ մասը կամ անստորագիր են, կամ ունեն զանազան կեղծանուններ, ուստի միայն կողմնակի վկայություններն են օգնում պարզելու նրանց հեղինակային պատկանելությունը» («Հանդես», 1969, № 2, էջ 109)։

Թվում էր, թե հեղինակն իսկապես կդիմի կողմնակի վկայությունների և նրանց օգնությամբ ցույց կտա այս կամ այն անստորագիր կամ ծածկանունով (կեղծանունով) ստեղծագործության պատկանելությունը։ Մինչդեռ միայն «Արշավույս արարատյանի» երկու-երեք տարվա հավաքածուն թերթելը բա-

¹ ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1969, № 4, էջ 78։

² «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 2, էջ 109։ Այսուհետև այս հանդեսներից արվող քաղվածքների տեղերը կնշվեն տողամիջում, կրճատ ձևով։

վական եղավ պարզելու, որ Ստեփան Ոսկանյանը սկզբնապես ունեցել է Հայկ Ստեփան Ոսկանյան կրկնանունը և ազդանունը, իսկ թերթի բազմաթիվ համարներում զետեղված թարգմանական նյութերի (ֆրանսերենից) և բանաստեղծությունների տակ դրված են «Հ. Ս. Ոսկանյան», «Հ. Ս. Ո» կամ «Հ. Ս.» ստորագրությունները: Հետևությունը պարզ է. դրանք բոլորը պատկանում են Ստեփան Ոսկանյանին՝ «Արևելք» և «Արևմուտք» հանդեսների ապագա խմբագրին:

Բայց տարակույս չառաջացնող այդ պարզաբանումն ապացուցելու համար Ս. Շտիկյանը ասում է. «Բավական է հիշատակել միայն, որ 1859 թ. Փարիզում հրատարակվող «Արևմուտք» երկշաբաթաթերթը, որն, ինչպես հայտնի է, հրապարակում էր Ստեփան Ոսկանյանը, ուներ «Արձագանք Եվրոպայի լուսավորության» ենթավերնագիրը, իսկ վերջում՝ «Խմբագիր-տնօրեն Հ. Ս. Ոսկանյան» նշումը, որը նույն Հայկ Ստեփան Ոսկանյանի կրճատված ձևն է» («Հանդես», 1969, № 2, էջ 109—110, «Լրաբեր», 1969, № 4, էջ 80):

Մեր ձեռքի տակ են «Արևմուտքի» 1859-ին լույս տեսած բոլոր 24 համարները, նաև 1864—1865 թթ. 12 համարների լուսատիպը: Դրանցից և ոչ մեկի տակ չի նշված «Խմբագիր-տնօրեն Հ. Ս. Ոսկանյան»: Հանդեսի տակ ստորագրված է միայն՝ «Համարատու Տրլեգր»: Դրա փոխարեն «Արևմուտքի» գրեթե բոլոր համարներում հանդիպում ենք նրա փաստական խմբագրի ստորագրություններին՝ «Ս. Ո.», «Ս. Ոսկանյան», և ոչ մի տեղ՝ «Հ. Ս. Ոսկանյան», «Հ. Ս. Ո.» կամ «Հ. Ս.»:

Բայց Ս. Շտիկյանը մի անգամ հրապարակ հանածից չի հրաժարվում: «Լրաբերի» 1974 թ. 4-րդ համարում (էջ 28) երրորդ անգամ նույնն է պնդում, միևնույն բառերով. «Բավական է ասել միայն, որ... «Արևմուտք» երկշաբաթաթերթը... ուներ... վերջում՝ «Խմբագիր-տնօրեն Հ. Ս. Ոսկանյան» նշումը...»:

Հարցը, սակայն, դրանով չի սպառվում:

Ս. Շտիկյանը ցանկանում է պարզաբանել, թե ինչու Ստեփան Ոսկանյանի, ինչպես և «դարասկզբի արևմտահայ մեր մյուս դրական-հասարակական գործիչների մոտ» («Հանդես», 1969, № 2, էջ 110) հանդիպում ենք երկրորդ անվանը: Եվ ի՞նչ. ըստ հեղինակի դա տեղի է ունեցել թուրքերի հետևությանմբ: Նրանցից ոմանք «...գերազանցապես մտավորականության շրջանում, որոշ անվան ու դիրքի հասած անձինք, իրենց իսկական անվան կողքին և դրա հետ մեկտեղ, գրում էին նաև իրենց տոհմական պատկանելությունը ցույց տվող որևէ (?) անուն, որի հետևանքով, միաժամանակ, ստացվում էր երկու անուն... Օսմանյան կայսրության հպատակ հայերն էլ, բնականաբար (!), պետք է (?) ընդօրինակեին վերոհիշյալ ձևը: Բարդությունը, սակայն, այն էր, որ հայերը համառորեն (!) չէին հրաժարվում երկու անվան հետ մեկտեղ նաև իրենց տոհմական ազգանունը կիրառելու սովորությունից, որի հետևանքով էլ Բիշրե շատ հասարակական անուն ու դիրք ունեցող անձանց մոտ ստացվում էր երկու անուն և մեկ ազգանուն...» (նույն տեղում, ընդգծումը մերն է—Մ. Հ.):

Այս բացատրությունը, որ բնագրում ավելի մանվածապատ է ու օրինակներով ծանրաբեռնված, Ս. Շտիկյանը կրկնել է հինգ տարի հետո, արդեն «Լրաբերում»: Նույն հարցադրմամբ ու նույն խոսքերով, բայց մի էական տարբերությամբ: Պարզվում է, որ թուրքերի այդ սովորությունը, որին «բնականաբար պետք է» հետևեին «Օսմանյան կայսրության հպատակ հայերը» (այս դեպքում միայն «Պոլսի և հատկապես Զմյուռնիայի մեր հայ մտավորականությունը»),

կապ չունի թուրքերի հետ: «Եվրոպական իրականության պայմաններում, — գրում է Ս. Շտիկյանը, — լայնորեն տարածված էր որոշ դիրքի ու ճանաչման հասնելուց հետո, սեփական անվան կողքին երկրորդ «հարգական» անունն ավելացնելու կարգը, մի անուն, որի օգնությամբ ասես ավելի էր ընդգծվում տվյալ անձնավորության հասարակական հեղինակությունը... Եվրոպական այս սովորույթն էլ, ահա, իր համապատասխան տեսական պատճառաբանությամբ (?!) ժառանգեցին XIX դ. արևմտահայ մեր մտավորականները (դարձյալ ամբողջ մտավորականությունը — Մ. Հ.) և առանց մնացորդի ներդրեցին (?) կյանքում» («Լրաբեր», 1974, № 4, էջ 29):

Խոսք չկա. ամեն մի հեղինակ էլ կարող է իրեն ճշտել, ուղղել թույլ տված վրիպումը, բայց հարցն այն է, որ պատմական իրողության կերպարանքով ներկայացվող պարզաբանումը ճիշտ չէ: Այդ, այսպես ասած, սովորությունը ոչ օսմանյան և ոչ էլ եվրոպական դրդապատճառներ չունեն, այլ հայրենասիրական մղումով թելադրվել էր Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանի հրաշակավոր տեսուչ Անդրեաս Փափազյանի կողմից, գոյատևել է մի կարճ ժամանակամիջոց և բնավ որևէ աստիճանի հասածների մենաշնորհը չէր, ինչպես և «պարբերականներում հանդես գալու» հետ ոչ մի կապ չունեն:

Ահա ինչ է այդ առթիվ վկայում Մեսրոպյան վարժարանի և Ա. Փափազյանի սան, հայտնի թարգմանիչ-բառարանագիր Մ. Նուպարյանը. «...Անդրեաս, ինքն արդեն եռանդուն հայրենասեր մը... ազգային պաամության իր սեփական դասը ավանդած միջոցին հորդահոս արցունքներ վթափեր: Նա իրեն համար կընդուներ և իր աշակերտներուն ալ ընդունել կուտար մեյմեկ հայ դյուցազնի անուններ, զոր ջերմեռանդորեն կհարեին իրենց անվան՝ անոր շինիչ գեղեցիկ օրինակը միշտ իրենց աչքին դիմաց ունենալու համար: Սովորաբար ընդունված մականուններն էին Հայկ, Արամ, Տիգրան, Արմենակ, Արտաշես, Գարեգին, Ռուբեն ևլն: Այս վերջին անունը որդեգրած էր Անդրեաս: Մենք ևս նույնը ըրած էինք՝ հետևելով մեր սիրելի դաստիարակին»³:

Կարծում ենք «սովորության» ժամանակակցի ու նրան հարած գործչի այս աներկբա բացատրությունից հետո որևէ այլ պարզաբանում տալու փորձը բոլորովին ավելորդ է:

Բայց Ս. Շտիկյանն արդեն արել է այդ: Հարց է ծագում՝ ինչու և ինչպես տեսանք, նա կրկնակի անուն կրելը դիտում է որպես հասարակական որոշակի դիրքի հասնելու ապացույց: Ու քանի որ Ստեփան Ռսկանյանն էլ ստացել էր «Հայկ» երկրորդ անունը, ապա նա սկսել է «կովաններ» դասդասել իրար վրա, որպեսզի ապացուցի, որ նա դեռ երիտասարդ հասակում «որոշ անվան ու դիրքի հասած «դեմք» էր, ուստի և «այս վերափոխմանը (իմա՝ կրկնանուն ստանալուն — Մ. Հ.), հասկանալի է, պետք է ենթարկվեր նաև Ստեփան Ռսկանյանի անունը» («Հանդես», 1969, № 2, էջ 110) կամ. «Ռսկանյանն այս սովորությունից բացառություն չկազմեց: Նա, չնայած իր երիտասարդ տարիքին, 1844 թ. սկզբներից ներկայացավ նոր՝ Հայկ Ստեփան Ռսկանյան անվամբ: Բանասիրական այս ճշգրտումը ամենևին էլ երկրորդական չէ, որովհետև...» («Լրաբեր», 1974, № 4, էջ 29): Եվ իրար հաջորդում են Ստ. Ռսկանյանի գործունեության ենթադրվող սկզբնաքայլերի թվարկումները՝ աշխատանքայինն ու ստեղծագործականը միմյանց հետ միախառնված, առանց

3 «Հունահայ տարեգիրք», Բ տարի, Աթենք, 1928, էջ 17—18:

պատշաճ վկայությունների ու փաստերի, արդիական տեղեկանքներով ու արտահայտություններով (նույն տեղում, էջ 27, 31, 32, 34) և այլն:

ՀՍՍՀ ԳԱ «Լրաբերում» տպագրված իր հոդվածում Ս. Շտիկյանը «բացատրություն» է տալիս ապացուցելու համար, որ Մեսրոպյան վարժարանի առաջագեմ աշակերտները պահվում էին որպես «օգնական վարժապետ» և որ այդ «նույն հակատագիրն (?) էլ վիճակվում է Ստեփան Ոսկանյանին» («Լրաբեր», 1969, № 4, էջ 79—80), այն դեպքում, երբ դեռ 1901-ին Լեոն գրել է, որ Ստ. Ոսկանյանը «մի քանի տարի դասատուի օգնականի պաշտոն էր վարում Մեսրոպյան վարժարանում»⁴, ապա և նույնը նշել են Վ. Զարդարյանը, Հր. Աճատուրը և ուրիշներ: Տարբերությունը սոսկ այն է, որ Ս. Շտիկյանը իր առաջին հոդվածում ենթադրաբար է հետևություն անում, որ նա ֆրանսերենի օգնական ուսուցիչ էր, իսկ հաջորդներում, դարձյալ առանց որևէ փաստարկման, արդեն հաստատուն կերպով է այդ նույնն ասում («Հանդես», 1969, № 2, էջ 109 և «Լրաբեր», 1974, № 4, էջ 28): Եվ դա այն դեպքում, երբ խոսելով Մեսրոպյանի ֆրանսերենի դասատու Պենիստրանի մասին, Ոսկանյանը հեռավոր ակնարկ անգամ չի անում նրա օգնականը լինելու վերաբերյալ⁵:

Հակառակ իր բոլոր փորձերին, Ս. Շտիկյանը չի կարողանում հաշտեցնել այն հակասությունը, որ առաջացել է իր ենթադրական պնդման ու փաստական վկայության միջև. «Ոսկանյանը 1843 թ. սկզբներին պետք է որ ավարտած լիներ Մեսրոպյան վարժարանը», բայց «Արշալույս արարատյանում» «ընդհուպ մինչև 1846 թ. վերջը, այսինքն մինչև Փարիզ ուղևորվելը Ոսկանյանի հրատարակած գործերի մեծ մասն ունեն «աշակերտ Մեսրոպյան վարժարանի» կամ «յաշակերտաց Մեսրոպյան վարժարանի» նշումը» («Լրաբեր», 1969, № 4, էջ 79): Հեղինակի բացատրությունը, թե «նորաթուխ օգնական վարժապետները» ի վերջո շարունակում էին աշակերտել այն ուսուցչին, որին իրենք կցված էին» ուստի և «որակվում էին նաև նախկին ձեռվ, այսինքն՝ «աշակերտ», բնավ չի լուծում Ոսկանյանի «օգնական ուսուցիչ» լինելու, միաժամանակ և «աշակերտ» կոչվելու հարցը:

Ըստ երևույթին հարցը պետք է այլ լուծում ստանա:

1. 1843 թ. հունվարի 1-ի համարում «Արշալույս արարատյանը» Ստ. Ոսկանյանի լրագրամսությունը տպել է «յաշակերտ վարժարանիս» նշումով. իսկ նույն թվականի հունվարի 29-ի համարում թերթը նույն հեղինակի լրագրամսությունը տպադրելով, չի ուղեկցել այդ նշումով: Այստեղից հետևություն է արվում, թե «Ոսկանյանը 1843 թ. սկզբներին պետք է որ ավարտած լինի Մեսրոպյան վարժարանը» («Լրաբեր», 1969, № 4, էջ 78—79) և քանի որ այդ վարժարանը «ավարտում էին հենց 18 տարեկան հասակում» (?) և Ոսկանյանը «սովորել էր ութ տարի (?)», ուրեմն նա վարժարան է ընդունվել 1835 թ.» (նույն տեղում): Այսպիսի «պետք է»-ներով լուծվում են կենսագրական կարևոր «անհայտներ» և վերոհիշյալ անհիմն բացատրությամբ միատեղվում «աշակերտն» ու «օգնական ուսուցիչը»: Հեղինակը չի էլ ենթադրում, որ Ոսկանյանը կարող էր վարժարան ընդունվել ավելի փոքր կամ մեծ տարիքում, սովորել ոչ թե բոլոր ութ տարիներին, այլ պակաս: Այս առթիվ հիշենք Ա. Փափազյանի տնօրինության օրոք Մեսրոպյանում սովորած Մ. Նու-

⁴ «Մուրճ», 1901, № 11, էջ 112:

⁵ Տե՛ս «Արևմուտք», 1864, № 5, էջ 36:

պարյանի վկայությունը. «Մեկտասնամյա հասակիս մեջ երրորդ դասարանի աշակերտ ըրավ զիս (իմա՝ Անդրեաս վարժապետը—Մ. Հ.) ...անկարծելի կերպով կցատկեի Աբիկյանի և «Եղբայր Հակոբի» դասարաններեն, կկտրեի կանցների վերի սրահի երկու խոնարհագույն դասերը՝ ճարտասանության աշակերտ ըլլալու համար հոտս Անդրեաս վարժապետի»⁶։ Վերջապես, Ստ. Ոսկանյանը կարող էր աշխատել նաև սովորելու հետ միաժամանակ՝ մանավանդ որ խոսքը կոնկրետ կարող է վերաբերել միայն «Սյունյացի» քարտուղար լինելուն (1844), այնուհետև, հավանաբար, եղել է «օգնական ուսուցիչ»⁷։ Ուսումնառությունից հետո հնարավոր է, որ դրանք մի կարճ ժամանակ համատեղել է, ապա դադարել քարտուղար լինելուց՝ մնալով միայն «օգնական ուսուցիչ»։ Մնացած բոլորը՝ ուսումնառության ու Մեսրոպյանն ընդունվելու ավարտելու տարեթվերը, «Հայկազյան ընկերության» եռանդուն անդամ լինելը, Մեսրոպյանի տպարանի տնօրինությունը և այլն, կարիք ունեն ուղղակի վկայության ու փաստարկի։

2. «...Մինչև 1846 թ. վերջը, այսինքն՝ մինչև Փարիզ ուղևորվելը» խոսքերով Ս. Շտիկյանը առանց երկմտելու Ոսկանյանի Զմյուռնիայից Փարիզ մեկնելու ժամանակը համարել է 1846-ի տարեվերջը («Լրաբեր», 1969, № 4, էջ 79)։ Ապա նա գրել է, որ «նույն թվականի (իմա՝ 1846-ին—Մ. Հ.) հավանորեն փետրվարին նա մեկնում է Փարիզ» («Հանդես», 1969, № 2, էջ 114)։ Հինգ տարի անց Ս. Շտիկյանը հայտնում է. «Ոսկանյանը 1846 թ. աշնանը ոտք էր դրել Ֆրանսիայի մայրաքաղաքը» («Հանդես», 1974, № 1, էջ 134), բայց և միաժամանակ գրում. «...մինչև 1846 թ. կեսերը, այսինքն՝ մինչև Ոսկանյանի Փարիզ մեկնելը...» («Լրաբեր», 1974, № 4, էջ 29)։

Այսպիսով, նույն հեղինակի տարբեր հոդվածներում Ոսկանյանի Փարիզ մեկնելը նշվում է չորս տարբեր ժամանակով՝ 1846-ի վերջերը, փետրվարը, աշունը և վերջապես տարվա կեսերը։ Որ, իրոք, Ոսկանյանը 1846 թ. է Փարիզ մեկնել, դա վաղուց ի վեր հայտնի էր, բայց կոնկրետ որ ամսին ու որ օրը՝ պետք է որ մեզ օգնեին պարզելու Ս. Շտիկյանի հոդվածները, որոնց նպատակն է ձգձգել «աղարտումները», պարզել «սպիտակ կետերը»։

3. Ս. Շտիկյանն իր առաջին հոդվածի մեջ խոսում է Ստ. Ոսկանյանի «տասնմեկ անուն գործի» մասին («Լրաբեր», 1969, № 4, էջ 82)։ Երկրորդում ավելացնում է «վեց անուն գործեր ևս» («Հանդես», 1969, № 2, էջ 112) և

6 «Արևելյան մամուլ», 1893, էջ 421։

7 Այդ իմաստով հետաքրքրական օրինակ է բերում ինքը Ս. Շտիկյանը՝ «Լրաբերի» 1969 թ. № 4-ի 79-րդ էջում, որը խոսում է հենց իր դեմ. բնագրային «միանգամայն» բառի իմաստը մեկնելու նպատակով նրա տված բացատրությունը՝ «նաև», սխալ է։ Քաղվածքում խոսվում է Ստ. Սարգսյանի մասին, որը «Մեսրոպյան վարժարանի ընտիր աշակերտներից մեկը և միանգամայն գեղեցկագրության և թվաբանության ուսուցիչ էր»։ Չենք կարծում, թե հեղինակը ծանոթ չէ Ստ. Մալխասյանի բացատրական բառարանին, բայց մի անգամ էլ դիմենք նրան։ Ընդգծված բառի բացատրությունն է. «1. Մեկ անգամից, մի նվագում։ 2. Ընդամենը, միահամուռ։ 4. Միևնույն ժամանակ, դրա հետ միասին։ 5. Բոլորովին, ըստ ամենայնի (հատոր 3, էջ 326)։ Այդ իմաստներից Ս. Շտիկյանը քաղում է միայն «նաև» իմաստը, մոռանալով, որ «միանգամայն» բառն իր հիմնական իմաստով նշանակում է «մեկ անգամից»՝ այսինքն «անմիջապես», «մեկ անգամեն», «մեկեն», «պիրտեն», ինչպես բացատրվում է «Առձեռն» բառարանում («Առձեռն բառարան հայկազյան լեզվի», Վենետիկ, 1865, էջ 562)։ Այս առթիվ նկատենք նաև, որ մեզ թվում է «աշակերտ» բառն «Արշալույս արարատյանում» հիշատակված դեպքում կիրառվել է «սան» իմաստով։ Համենայն դեպս բառն այս իմաստով ընկալումն օգնում է վերացնելու Ոսկանյանի ուսումնառության և աշխատելու տարեթվերի կարծեցյալ շփոթը։

չգիտես ինչպես եզրակացության մեջ ստանում է քսան անուն գործեր» (նույն տեղում, էջ 114): Հինգ տարի անցնելուց հետո, իր երրորդ հոդվածում արդեն հրատարակած նույն փաստարկները կրկնելուց հետո, խոսում է «քսանհինգ անունի հասնող» ժառանգության առկայության մասին («Լրաբեր», 1974, № 4, էջ 29), թեև նշում է նախկին հոդվածներից արդեն հայտնի միայն ութ գործ: Կարող է թվալ, թե հեղինակը այդ գործերն ի հայտ է բերել դանազան աղբյուրներից և տարբեր ժամանակներում: Մինչդեռ նրա միակ աղբյուրը նույն «Արշալույս արարատյանն» է, որի հավաքածուն միշտ էլ մատչելի էր որոնողին: Թերևս դրա հետ կարելի է մի կերպ հաշտվել, բայց Ս. Շտիկյանը այդ գործերի գրականագիտական գնահատության ընթացքում չափազանցության մեջ է ընկնում: Ահա նրա նախնական կարծիքը. «Մեծ հետաքրքրություն են ներկայացնում» («Լրաբեր», 1969, № 4, էջ 81, 82): Ահա և վերջինը, հինգ տարի հետո. «Ոսկյանյանը ոչ միայն հաջողությամբ խուսափեց ժամանակին թարածված գրական այլևսյա խոշ ու խուլերից, այլև գեղարվեստական իր գործերով առաջ քաշեց «մանկտիների» դաստիարակության հետ առնչվող կարևոր խնդիրներ..., որոնք հետագայում պետք է կազմեին հայկական լուսավորական գաղափարաբանության հիմքն ու ակունքը» («Լրաբեր», 1974, № 4, էջ 33—34):

Բանասեր հետազոտողը պետք է ցույց տար դրանց գրական, պատմական և բանասիրական արժեքը: Բայց դրա փոխարեն նա ամեն անգամ բավարարվել է լուկ մեկ կամ երկու խիստ ընդհանուր նախադասությամբ, առանց որևէ մեջբերում անելու այդ ստեղծագործություններից և առանց փորձելու պատասխանել դրանց հետ կապված շատ հարցերի:

Խոսելով այն մասին, որ «բեղմնավոր է սկսում իր գործունեությունը Ոսկյանյանը» («Լրաբեր», 1969, № 4, էջ 81), Ս. Շտիկյանը տարանջատում է երիտասարդ Ստ. Ոսկյանյանի ստեղծագործական ուղին նրա իսկ հետագա ուղուց՝ պատճառաբանելով, թե Ոսկյանյանը Փարիզ է մեկնել, թե 1845-ի հունիսի 21-ի «սոսկալի հրդեհը եկավ հիմնիվեր խախտելու ինչպես ամբողջ իդմիրահայ համայնքի, իբրև հասարակական միավորի, այնպես էլ Ոսկյանյան-անհատի զարգացման պայծառ ուղին» («Լրաբեր», 1974, № 4, էջ 34): Մի՞թե Ս. Շտիկյանի կարծիքով Ստ. Ոսկյանյանի հետագա ուղին «պայծառ» չէր, մի՞թե, եթե որևէ այլ բան նկատի չունենանք, նրա խմբագրական-հրապարակախոսական գործունեությունը բաղմակի անգամ ավելի «պայծառ» չէր և նրա զարգացման ուղու «հիմնիվեր խախտման» արդյունք էր: Համենայն դեպս դրա հետ երբեք չէր համաձայնվի ինքը Ստ. Ոսկյանյանը, որն իր կենսագրությունն աղավաղող հեղինակին՝ «Թեթեվ ՀԱՅԻՆ» (ընդգծումը մերն է—Մ. Հ.) պատասխանելով, մեծագույն արժանապատվությամբ նկատել է, թե «մեր լրագրին փոշին, օր մը, մեզ ավելի պատիվ պիտի ընե, քան թե մեր դույզն և պակասավոր աշխատասիրությունը»⁸: Դրանից բացի Ս. Շտիկյանը, հավանաբար, չի մոռացել, որ Ստ. Ոսկյանյանը գրեթե մինչև կյանքի վերջը չի դադարել բանաստեղծություններ գրելուց և հետագա տարիներին դրածները, համենայն դեպս տպագրածները շատ ավելի արժեքավոր են:

Ս. Շտիկյանը մեկից ավելի անգամ խոսում է այն մասին, որ Ստ. Ոսկյանյանը հայերեն է պարապել Առաքել ու Նուպար Նուպարյանների հետ՝ գիտողություն անելով նախորդ ուսումնասիրողներին, թե նրանք բավարար-

⁸ «Արևմուտք», 1859, էջ 118:

վել են միայն փաստը նշելով: Տեսնենք ի՞նչ է ասում ինքը՝ Շտիկյանը այդ, իր արտահայտությամբ ասած, «կարևոր հանգամանքի» մասին. «Իր Առաքել և Նուպար որդիների հետ մեկտեղ, մոտ մի տարի առաջ (իմա՝ 1843-ին — Մ. Հ.), Զմյուռնիա էր վերադարձել Մկրտիչ Նուպարյանը... Նա կամենում էր իր որդիներին ուսման տալ Մեսրոպյան վարժարանում, իսկ ինքը որոշել էր որոշ դրամագումար կուտակել առևտրական գործունեություն սկսելով: Զմոռանանք, որ այդ թվականներին դեռ չկար Սուեզի ջրանցքը..., մի բան, որը հարստանալու հրաշալի պայմաններ էր ստեղծում գործունյա զմյուռնիահայության համար: Սակայն որդիներին Մեսրոպյան վարժարան տեղավորելու հարցում ծայր առավ չնախատեսված մի դժվարություն (?) : Նուպարյանները՝ ընտանիքը ֆրանսախոս էր, հայերեն գրեթե չիմանալու չափ, և այս հանգամանքը մեծ բարդությունների (?) տեղիք էր տալիս ամբողջ էությամբ հայկական թեքում ունեցող Մեսրոպյան վարժարանում: Դժվար է ասել, թե ինչ հետևանք կունենար դեպքերի ընթացքը, եթե գործին չմիջամտեր (?) Ոսկանյանը...» («Լրաբեր», 1974, № 4, էջ 31) և այլն: Հաջորդ հոդվածում այս պատումը դանաղան հավելագրումներով կրկնելով, Ս. Շտիկյանն արդեն պնդում է, թե «նախնական պայմանավորվածության համաձայն, Ոսկանյանը Փարիզում պետք է հայերենի դասեր տար Առաքել Նուպարյանին և, միաժամանակ, նրա օգնությամբ կատարելագործեր իր ֆրանսերենը. մի բան, որն, ի դեպ, երկուստեք կատարվեց ջանասիրաբար» («Հանդես», 1974, № 1, էջ 134, հմմտ. «Լրաբեր», 1974, № 4, էջ 31): Այսպիսով, բացի գործողության վայրը Զմյուռնիայից Փարիզ փոխադրելը, նա ուրիշ ոչինչ չի ավելացնում այն բանին, ինչ հայտնի է Ստ. Ոսկանյանի վկայությունից. «Առաքել պեյ մասնավորապես ճանչցանք, երբ Եվրոպայի մեջ իր ուսումը կատարելեն ետքը, Իզմիր դարձավ, ուր կաշակերտվեինք մենք այն ատեն: Թե՛ Նուպար պեյ և թե՛ ինքը հայերեն չէին գիտեր և մեզի հանձնվեցավ, որ մայրական լեզուն նորեն հիշել տանք... Առաքել պեյ իր մեծ եզբորմեն ավելի ուշ գնաց Եգիպտոս և հետևաբար ժամանակ ունեցավ հայերենը ըստ բավականին սովորելու... Միևնույն օրը Իզմիրեն ելանք, ինք Ադեֆսունդրիա և մենք Բարիզ ուղևորվելու համար... մեյ մ' ալ զինքը չտեսանք և հաբեբուրյուն մ' անգամ չունեցանք իրարու հետ...»⁹:

Ամբողջ ելելությունն այդ է, մնացած բոլորը լեզենդ է, ներառյալ և այն պնդումները, թե Ոսկանյանը Փարիզում հանգրվանում էր Նուպարյանների տանը, թե Ոսկանյանի դեմ էին տրամադրվել նրա ազգականները՝ Նուպարյանները, թե նրանք «Ոսկանյանի պես «խռովարարին» պետք է հնարավորինչ չափ շոտ հասկացնեին, որ նա շատ էլ հաճելի մարդ չէ իրենց համար», թե «Ոսկանյանը պետք է որոշակիորեն բացաղատվեր նրանցից և հրապարակավ ազդարարեր իր հավատամքը» և այլն («Հանդես», 1974, № 1, էջ 143):

Այժմ անդրադառնանք Ս. Շտիկյանի «Ստեփան Ոսկանյանի կյանքի և գործունեության փարիզյան տարիները» հոդվածին (տե՛ս «Հանդես», 1974, № 1, էջ 133—146):

Առաջին հերթին աչք է ծակում այն, որ հոդվածի հեղինակը, նպատակ ունենալով լուսաբանել Ստ. Ոսկանյանի կյանքի բուն հեղափոխական տարեշրջանը, դարձյալ չի վկայակոչել որևէ նոր աղբյուր, երևան չի հանել որևէ

⁹ «Արևմուտք», 1859, էջ 34 (ընդգծումները մերն են — Մ. Հ.):

նոր փաստ: Գիտական հոգվածի համար անհրաժեշտ այդ տարրերը չպարունակելուց բացի, Ս. Շտիկյանի հոգվածը տառապում է ավելի խոցելի միտումով. այն գրեթե ամբողջապես ձևված է Ֆրանսիայի մայրաքաղաքի 1848—1852 թթ. պատմության ֆոնի վրա՝ Ստ. Ոսկանյանի նույն տարիների կենսագրությունը, առանց որևէ անհրաժեշտության, պճնելու չթաքցված փափագով:

Ոսկանյանի գործունեության ուսումնասիրությունը, եթե նրա սկիզբը համարենք Լեոյի՝ 1901 թ. հրատարակված ծավալուն գործը, անցած տասնամյակների ընթացքում հասել է մի որոշակի աստիճանի՝ մանավանդ շնորհիվ Ա. Գ. Հովհաննիսյանի և Ա. Բ. Կարինյանի մենագրությունների, որոնցում, ինչպես և «Հայ նոր գրականության» պատմության մեջ, Ստ. Ոսկանյանին առանձին տեղ է հատկացված: Դրանից հետո ուսումնասիրողի խնդիրն է ի հայտ բերել անհայտ մնացած նյութերը, երևան հանել նոր վավերագրեր, ուղղորդություն հրավիրել չնկատված փաստերի վրա, ճշտել ու ճշգրտել այս կամ այն մեկնաբանությունը և այլն:

Ս. Շտիկյանն այդպես չի վարվում: Ընդհակառակը, նա անդիտանում է արդեն արվածին և բանն այնպես է ներկայացնում, թե ընթանում է շտրոգված ուղիով, ինչ նոր վարկածներ է առաջ քաշում:

Ընդհանուր, հանրահայտ գրականությունից՝ XIX դարի պատմությանը նվիրված հայտնի բազմահատորյակից, Մարքսի ասույթներից ու Տարլեից բացի նա իր համար կռվան է դարձրել «Մասիսը», Հր. Ասատուրի «Դիմաստվերները», 1859 թ. «Արևմուտքի» և «Արշալույս արարատյանի» այն մի քանի համարները, որոնց էջերում վկայություններ կան Ստ. Ոսկանյանի Փարիզում ծավալած գործունեության մասին: Այդպիսով, արդեն բազմիցս գիտական շրջանառության մեջ դրված ու մեկնաբանված փաստերն ու վկայությունները Ս. Շտիկյանի հոգվածում նորից արծարծվում ու իրար են բարդվում՝ այս անգամ Ֆրանսիայի պատմությունից քաղված փաստերի ու ֆրանսիական գործիչների անունների հետ համադրված:

1859 թ., երբ Ստ. Ոսկանյանը իր «Արևմուտքի» էջերում Փարիզից եռանդուն պայքար էր ծավալում, Կ. Յուլյուսյանի՝ Կ. Պոլսում լույս տեսնող «Մասիս» թերթը հանդես է եկել Ստ. Ոսկանյանի և նրա պարբերականի դեմ ուղղված մաղձոտ հոգվածով, որին Ստ. Ոսկանյանը պատասխանել է «Քսանչորս ստորություն» հայտնի պամֆլետով:

Այդ երկու վավերագրերը, հակառակ նրանց հակադիր բնույթին, բնականաբար ուշի ուշով քննվել են: Դրանց անդրադարձել է, մանավանդ, Ա. Գ. Հովհաննիսյանը, ապա և Ա. Բ. Կարինյանը, որը մասնավորապես շեշտում է, թե «ոչ մի նշանակություն չէին կարող ունենալ նաև Ոսկանյանի բացառապես պաշտպանության նպատակով ասված խոսքերը՝ 1848-ից հետո սկսված ռևոլյուցիոն շարժումների մասին, կամ թե Կաբեի ուտոպիական հայեցողության հետ համաձայն չլինելու մասին», և պահանջ առաջադրում՝ հաշվի առնել Ոսկանյանի «բոլոր տպագրված նյութերը»: Ա. Գ. Հովհաննիսյանն այդ առթիվ հիշեցնում է Ստ. Ոսկանյանի հակառակորդներից մեկի դեմ Հ. Պարոնյանի ասածը, թե նա «խոսքերու վարսավիր մ' է, որ աստիեն անդիեն խոսքեր հավաքելով՝ զանոնք կսանտրրե, կկոկե, անուշաբույր յուղերով կօծե և հրապարակ կհանե, և երկու տողով հասկանալի բան մը յուր գրչին տակ երկու էջի մեջ անհասկանալի կրլլա»:

Խնդրո առարկա այդ երկու վավերագրերին Ս. Շտիկյանը մոտենում է յուրովի, մեղադրելով նրանց, ովքեր 1846—1852 թթ. Ստ. Ոսկանյանի գործունեության մասին (հասկանալի է, փաստերի սղության պատճառով) նշել են միայն երկու խոսքով:

Ահա, մոտավորապես, Ս. Շտիկյանի սխեման. Տառյանները Փարիզում էին: Նրանց մոտ պիտի հավաքվեին պանդուխտ հայերը: Նուպարյանները բարձր դիրք ու համարում էին ձեռք բերել Փարիզում, ուրեմն նրանք պետք է հովանավորեին կարիք ունեցողներին: «Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում» Ստ. Ոսկանյանին ուրիշ ձեռք մեկնողներ էլ կգտնվեին. կար Ղ. Պալթազարյանի հանձնարարական-նամակը: Ոսկանյանն էլ, որ Զմյուռնիայում «չթաքցված զարմանքի բազում բացականչություններ (?) կորզեց իզմիրահայության նկատմամբ նույնիսկ ոչ այնքան դրականորեն տրամադրված մարդկանցից ու պարբերականներից» («Լրաբեր», 1974, № 4, էջ 34), հիմա պիտի հիացնի իր ապագա տնօրենին՝ Լաբրուստին: Եվ, իսկապես, «այն, ինչին ակահատես ու ականջալուր եղավ նա հանձնիս Ստեփան Ոսկանյանի, վեր էր ամեն պատկերացրածից: Բիտելիքների այն մեծ պաշարը, որը խոսակցության ընթացքում դրսևորեց Ոսկանյանը, եվրոպական և հատկապես ֆրանսիական գրականությանն ու արվեստներին նրա բաշատեղյակությունը, երևույթները զնահատելու, վերլուծելու ու ընդհանրացնելու նրա ինֆնուույն, հանախ համարձակ ունակությունը և վերջապես մաքուր, անսայթափ, փառիզյան առաքանություն ունեցող նրա ֆրանսերենը հիացրին Լաբրուստին» («Հանդես», 1974, № 1, էջ 134—135: Ընդգծումը մերն է—Մ. Հ.):

Այդ ամենը նույնպես լոկ ենթադրություններ են, առանց որևէ հիմքի ու փաստարկի՝ բացի այն, որ իրոք «Պալթազարյանը մեզ բարեկամություն րրած էր... փոքր նամակ մը տալու պ. Լապրուստին համար», ինչպես գրում է Ոսկանյանը «Արևմուտքում»: Նաև իրողություն է, որ Ստ. Ոսկանյանը չի դիմել Նուպարյանների աջակցությանը. դա նրա համար նվաստացուցիչ էր՝ «կյանքը մեզի համար այնքան սիրելի չէ, որ մահեն առաջ նվաստությունը ընտրենք...»: Նաև այս. «Բարիկ հասնելեն երկու շաբաթ ետքը պարոն Լապրուստը ճանչցանք... Կհաստատենք թե երբեք Սենդ Պարպի մեջ չմտանք իբրև աշակերտ... Պարոն Լապրուստ օր մը... մեր լեզվագիտությունը և ուսումնասիրությունը նշմարելով՝ հաճեցավ թեթև պաշտոն մը տալ մեզ վարժատունեն դուրս»¹⁰: էլ ո՞ւր մնացին ֆրանսերենի դաստավությունը «վարժարանի ոչ ֆրանսիացի աշակերտներին» և սրանց «վարք ու բարքին» հետևելը, առավել ևս «Սենտ-Բարպում» գործունեություն ծավալելը: «Ցավոք հայտնի չէ», ասում է Ս. Շտիկյանը:

Նույնպիսի մշուշապատ ֆոն է նաև «Նասիոնալ» և «Ռեֆորմ» թերթերի, նրանց խմբագրությունների շուրջն արվող վերապատումը՝ լոկ այն հիման վրա, թե ինչ-որ ժամանակ ասվել է, որ ֆրանսիական այդ թերթերին աշխատակցել է Ստ. Ոսկանյանը: Ոսկանյանի գործունեությունն ուսումնասիրողներից ոչ մեկը, իսկ Ս. Շտիկյանն առավել ևս, փորձ չեն արել փաստարկելու այդ: Լեոն 1901-ին ընդարձակորեն խոսելով «Նասիոնալի» և նրա խմբագրի մասին, ոչ մի փաստով ցույց չի տվել Ոսկանյանի աշխատակցությունը թերթին կամ նրա համագործակցությունը առավել ձախ քաղաքականություն վա-

¹⁰ «Արևմուտք», 1859, էջ 130:

րող խմբի հետ՝ ենթադրություն, որը վաթսույն տարի անց կրկնել է Ա. Մակարյանը՝ հարցը հանգեցնելով նրան, թե Ստ. Ոսկանյանի դավանանքը հեռու չէր Մարքսի և էնգելսի գաղափարախոսությունից՝ միաժամանակ խոստովանելով, որ «դժբախտաբար մեր ձեռքի տակ չկան Ոսկանի այն հոդվածները, որ նա հրատարակել է «Ռեֆորմում» և «Նասիոնալում»¹¹։

Հիմա առաջին փորձից՝ 75, իսկ վերջինից՝ 15 տարի հետո նույնն է անում Ս. Շտիկյանը՝ դարձյալ խոստովանելով, թե այդ թերթերում «ինչ էր գրում նա՝ չգիտենք» («Հանդես», 1974, № 1, էջ 138) կամ՝ «Ռեֆորմ» թերթի ստեղծած «Կլուբում» «ինչ դեր ունեւ Ոսկանյանը..., ցավոք չգիտենք» (նույն տեղում, էջ 139)։ Այդ «չգիտենքներից» հետո հեղինակը ի վերջո հանգում է «խիստ կարևոր այն եզրակացության», թե «Ոսկանյանին վստահված էին ժողովրդական մասսաներին տեղի ունեցող իրադարձությունները բացատրելու ու նրանց պայքարի կոչելու, այսինքն՝ «Օրատոր դր կարֆուրի» պարտականությունները» (նույն տեղում, էջ 139)։ Բայց լսենք Ոսկանյանին. «...Հայտնի կխոստովանինք, որ Բլյուալի անդամ չեղանք երբեք... Քարոզիչի պատիվն ալ չունինք, և օտարականի մը դյուրին չէ Բարիզի ժողովուրդին ապստամբություն քարոզել, ասիկա լավ գիտե ապստամբություն ինչ ըսել է և մեր խոսքերու կարոտություն չունի, կարծենք»¹²։

Ստ. Ոսկանյանը այնուհետև դրել է. «Պարոն Լապրուստը օր մը պ. Գ. Տատյանին սենյակը տեսնելով զմեզ...» և այլն։ Այս մի հաաիկ հիշատակությունը բավական է եղել, որպեսզի Ս. Շտիկյանը հենց միայն այս հոդվածում գրի. «Գոյություն ունեին հայազգի ծանոթ-բարեկամների մեկ-երկու հիմնական հանգրվաններ, որոնց ապավինելու (:) հույսով Ոսկանյանը 1846 թ. աշնանը ոտք էր դրել Ֆրանսիայի մայրաքաղաքը։ Դրանցից առաջինը Հարություն-Գարեգին Տատյանն էր, հետագայում հանրահայտ պետական գործիչ, Փարիզում թուրքական դեսպանատան առաջին քարտուղար Գարեգին փաշան։ Վերջինս 1842 թ. հոկտեմբերին իր հոր՝ արքունի վառողապետ Հովհաննես Տատյանի հետ միասին այցելել էր Զմյուռնիա, եղել էր Մեսրոպյան վարժարանում և այդտեղ էլ ծանոթացել Ոսկանյանի հետ. մի ծանոթություն, որը հետագայում վերածվել էր մտերմության։ Հիշյալ՝ 1846 թ. կեսերին, Հարություն-Գարեգին Տատյանը կատարելագործվելու նպատակով պատրաստվում էր ընդունվել Ալեքսանդր Լաբրուստի տնօրինության ներքո գտնվող «Սանտա Բարբառա» կամ կրճատ՝ «Սենտ Բարա» անունը կրող դպրոցը, որտեղ իսկապես ընդունվեց 1847 թ. սկզբներին։ Ի բնե ունենալով մարդամոտ ու պարզ բնավորություն, Տատյան-որդին կարողացել էր իր բնակարանը մի տեսակ ժողովատեղի դարձնել պանդուխտ հայորդիների համար, որոնք տարբեր առիթներով սիրում էին հավաքվել այնտեղ» (էջ 134)։ Եվ ապա՝ 1848—1849 թթ. դեպքերի կապակցությամբ. «Փոխվածներից» առաջինը հայր և որդի Տատյաններն էին։ Հեռատես էր ու խորամանկ Տատյան-հայրիկը։ Նա իսկույն կռահեց, որ իր որդուն՝ Հարություն-Գարեգին Տատյանի մտերմությունը այնպիսի «վտանգավոր» մեկի հետ, ինչպիսին էր Ոսկանյանը, ոչ միայն լավ բան չէր կարող խոստանալ, այլև կարող էր շարիքների դուռ բանալ և առընդմիջտ խորտակել որդու

¹¹ «ՀՍՍՀ պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածու», № 6, մաս 1, Երևան, 1960, էջ 148։

¹² «Արևմուտք», 1859, էջ 131։

ապագան: Եվ նա անհապաղ որդուն ուղարկեց Պոլիս, հարազատների մոտ, մանավանդ, որ այդ անելու հրաշալի փաստարկ կար. որդին ավարտել էր «Սենտ-Բարպը»: Ի՞նչ տոմարեց որդին «Սենտ-Բարպում», քանի որ նա այնտեղ մեկ տարուց էլ պակաս մնաց (Հարություն-Գարեգին Տատյանը ավարտեց 1848 թ. հունվարի 31-ին), իսկապե՞ս ավարտեց այդ հաստատությունը, թե այստեղ էլ «օգնեց» ամենակարող հայրիկը, ի՞նչ տպավորություն կթողներ այդ բոլորը Փարիզի ու Պոլսի համազգիների վրա, — այդպիսի անհարմար հարցեր իրեն չտվեց Առաքել Տատյանը: Նա 1848 թ. սկզբներին, այսինքն հեղափոխությունից բառացիորեն մի քանի օր առաջ որդուն փախցրեց Փարիզից¹³ և աներկամտորեն հասկացրեց նրա մոտ հաճախակի հավաքվող ծանոթ-ընկերներին, որ ամեն ինչ արդեն ավարտված է» (էջ 143):

Մեկնաբանությունները թողնում ենք ընթերցողին:

Մի բնորոշ օրինակ ևս: Նա գրում է, որ Ոսկանյանը բժշկական ֆակուլտետում սովորելով՝ չդարձավ մասնագետ-բժիշկ, բայց դա նրան «հնարավորություն տվեց կողմնորոշվելու բժշկության տեսության հետ առնչվող մեկից ավելի հանգուցային հարցերում» (էջ 144): Դա ապացուցելու համար Ս. Շտիկյանը չնկատելու դնելով, որ բերում է իրեն հերքող վկայություն, տեղնուտեղը մեջ է բերում Ստ. Ոսկանյանի խոստովանությունը. «Ես ժամանակավ քիչ մը բուժական արհեստին հետևեր եմ մարդուն կազմը հասկնալու, քան թե մարմինը դարմանելու համար»:

Մի քանի խոսք էլ Ս. Շտիկյանի այն հոդվածների ու հաղորդումների մասին, որ լույս են տեսել պարբերական մամուլում՝ դարձյալ Ստ. Ոսկանյանի շուրջը: Դրանք հրատարակվել են «Երեկոյան Երևան», «Գրական թերթ», «Հայրենիքի ձայն» թերթերում՝ դարձյալ վերջին հինգ-վեց տարիներին:

Առաջին հոդվածը, դատելով խորագրից՝ «Ստեփան Ոսկանյանի «Լա Իտալի» թերթը», («Գրական թերթ», 26 հունիսի 1971 թ.), պետք է որ հայտնի չափով լրացներ հայ ականավոր խմբագիր-հրապարակախոսի գործունեության մի կարևոր էջը. չէ՞ որ դա Սարգիսիայում ֆրանսերեն հրատարակված այն թերթն է, որի խմբագիրը եղել է Ստեփան Ոսկանյանը՝ մոտավորապես 1861—1862 թթ.:

Ս. Շտիկյանը հոդվածի առաջին տողերում խոստանում է վերացնել «Ստեփան Ոսկանյանի կյանքի «սպիտակ կետերից» մեկը», պատասխանել «բազմաթիվ հարցերի: Ի՞նչ գործ ուներ Ոսկանյանը Իտալիայում... Այդ ի՞նչ թերթ էր... Ի՞նչ բնույթի հոդվածներով էր հանդես եկել նա...» և այլն, հարցեր, որոնք «ավելի քան վաթսուն (փոխանակ հարյուր տասը—Մ. Հ.) տարի մնում էին անպատասխան»: Եվ ահա, գրում է նա, — «վերջապես հնարավոր եղավ Հայաստանում ունենալ Ստեփան Ոսկանյանի՝ Տուրին քաղաքում հրատարակած «Լա Իտալի» թերթը» (իմա՝ պահպանված մի համարի լուսատիպը—Մ. Հ.): Եվ ի՞նչ: Գրեթե ոչինչ: Ամեն ինչ հայտնի է դառնում թերթը ամենօրյա էր, ֆրանսերեն, բնույթով քաղաքական էր, երկու էջանի, չափսը 40×56, տարածվել է հիմնականում Սարգիսիայում և այլն, նաև այն, թե ինչ է տեղավորված այդ համարի երկու էջերում... մինչև «ամենաներքևի մասում զետեղված մի քանի տողա-

¹³ Հիշենք նաև, որ Ս. Շտիկյանը մի քանի տարի առաջ նույն Գարեգին-Հարություն Տատյանի մասին «Պատմա-բանասիրական հանդեսում» գրել էր, թե նա «1845 թ. կեսերից արդեն մեկնել էր Փարիզից» («Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 2, էջ 114):

նոց հաղորդումը»։ Ի՞նչ կապ ունի, սակայն, թերթի այդ համարը Ստ. Ոսկանյանի հետ, ի՞նչ է նա այնտեղ գրել։ Ոչ մի խոսք այդ մասին չի ասում հեղինակը։ Եվ պարզվում է... թերթի այդ համարում չկա նույնիսկ Ստ. Ոսկանյանի անունը՝ ոչ իբրև խմբագիր, ոչ իբրև հեղինակ։ Միայն հոդվածի վերջում Ս. Շտիկյանը գրում է, որ նույն այս մեկ համարն էլ առաջացնում է Ոսկանյանի գործունեության հետ կապվող ոչ պակաս առաջնահերթ հարցադրումներ, որոնց պատասխաններ տալ առայժմ անկարելի է»։

Եվ այսպես, «բարձրագույն հարցերին» ավելացան լուկ «առաջնահերթ հարցադրումներ»։ Էլ ո՞ւր մնաց Ստ. Ոսկանյանի «Լա Իտալիի» մասին խոսելու խոստումը, էլ ինչո՞վ բացվեց «Ոսկանյանի իտալական շրջանի գործունեության առ այսօր փակ վարագույրը»։ Դա մնում է հեղինակի գաղտնիքը։

Խոստումնալի խորագիր է կրում նաև Ս. Շտիկյանի հաջորդ հոդվածը՝ «Թափառական հրեայի» թարգմանության առաջաբանը» («Գրական թերթ», 27 հուլիսի, 1973)։ Հեղինակը հավաստիացնում է, որ մի նոր «սպիտակ կետ» ևս վերանում է, որովհետև նրան հաջողվել է հասնել իր նպատակին՝ ստացել է «Թափառական հրեայի» Ստ. Ոսկանյանի գրած «ամբողջ առաջաբանի ֆոտոպատճենը», որը և մեկնաբանում է՝ սկսելով առաջաբանի էջերի քանակից ու «գեղեցիկ դարձվածքներից», ընդգրկելով գաղափարական բովանդակությունն ու հակակրոնական մերկացումները։ «Ոսկանյանական առաջաբան», «գրում է Ոսկանյանը», «շարունակում է Ոսկանյանը», «Ոսկանյանն ավելացնում է», «Ոսկանյանը գնահատում է» և այլ այսպիսի արտահայտություններով Ս. Շտիկյանն ասում է այն մասին, թե ինչ է իրենից ներկայացնում առաջաբանը, կատարում է ընդարձակ քաղվածքներ, և եզրակացնում. «Հանձին «Թափառական հրեայի» ոսկանյանական առաջաբանի, հայ նոր գրականությունը հարստացել է մի նոր ուշագրավ գործով, իսկ ոսկանյանագիտությունը լրացրեց իր պակասող օղակներից մեկը ևս, որի կարիքը զգալի էր մեծապես»։

Այդ հոդվածը լույս տեսնելուց մի քանի ամիս հետո Ս. Շտիկյանը մեյ տրամադրեց «Թափառական հրեայի» առաջաբանի բոլոր 12 երեսների լուսատիպ պատճենը։ Եվ ի՞նչ... Պարզվում է, որ Ստ. Ոսկանյանին վերագրված ու իբրև նրա «մի նոր ուշագրավ գործ» վերլուծված առաջաբանի տակ դրված է բոլորովին այլ ստորագրություն՝ «Խ. Օ.», որը, ինչպես պարզ է գրքի անվանաթերթից, ոչ այլ ոք է, քան ինքը՝ թարգմանության հրատարակիչ Խաչատուր Օսկանյանը։ Առաջաբանի վերնագիրը նույնպես՝ «Յառաջաբան հրատարակչին», վկայում է, որ այն Ստ. Ոսկանյանինը չէ։ Այսպիսով, գիտակցաբար, թե անգիտակցաբար այս անգամ ևս գուցե և ցանկալին իրականության տեղ ընդունելով, Ս. Շտիկյանը գրական հասարակայնության է ներկայացրել Խ. Օսկանյանի հրատարակությամբ ու ստորագրությամբ լույս տեսած նախաբանը՝ այն վերագրելով Ստ. Ոսկանյանին և քննելով իբրև նրա գրչի արգասիք։ Եվ դա այն դեպքում, երբ Ստ. Ոսկանյանին Ս. Շտիկյանի վերագրած առաջաբանում խոսվում է նաև թարգմանչի, այսինքն՝ իր փակ Ստ. Ոսկանյանի աշխատանքի մասին, երբ հայտնի է, որ նա հրաժարվել է սկսված գործից, չի ուզել, որ իրեն պատասխանատու համարեն փոփոխության ենթարկված թարգմանության և առաջաբանի համար։

Բավականաչափ մեծախոստում է նաև Ս. Շտիկյանի հաջորդ լրագրական հոդվածը՝ «Հիպոլիտ Տեն և Ստեփան Ոսկանյան», որ հրատարակվել է

«Երեկոյան Երևան» թերթում (3 օգոստոսի 1974 թ.): Ինչպես վերնագիրն է ցույց տալիս, բանասերի նպատակն է այս անգամ անդրադառնալ այն գործիչներին, որոնց հետ Փարիզում Ստ. Ոսկանյանը շփումներ է ունեցել:

Դեռ 1971-ին ձեռքի տակ ունենալով Ստեփան Ոսկանյանի ֆրանսերեն անհայտ մնացած երկու երկը¹⁴ և նրան առնչվող նոր նյութեր, մենք հրապարակեցինք «Դալուստ Կոստանդյանը, Ստեփան Ոսկանյանը և էմիլ Լիթրեն» հոդվածը, որտեղ անդրադարձանք նաև Հ. Տեն—Ստ. Ոսկանյան հարցին: Մասնավորապես նշել ենք, որ պամֆլետում «խոսքը ոչ թե ինչ-որ Հենրի Տենի, այլ արվեստի ու գրականության հայտնի տեսաբան, փիլիսոփա ու պատմաբան Հիպոլիտ Տենի մասին է»¹⁵:

Սակայն Ս. Շտիկյանը, չգիտես ինչու, առանց որևէ հիշատակության. իր հոդվածում փաստորեն վերակրկնել է այդ նույնը: Նա պնդում է, թե պամֆլետում հիշատակվող Ալբերը «բանվոր-մեքենագործ Ալեքսանդր Մարտեն Ալբերն է»՝ «ֆրանսիական հեղափոխության նշանավոր գործիչը», «բանվորական պաղտնի կազմակերպության հիմնադիրը»: Չենք բացառում, որ Ստ. Ոսկանյանը կարող էր նկատի ունենալ հենց Ալբերին, բայց չէ՞ որ դեռևս ոչ մի հիմք չունենք այդ ենթադրությունը հաստատելու համար, ուստի և իրավունք չունենք անառարկելի ձևով խոսելու այդ մասին, ինչպես դա անում է Ս. Շտիկյանը:

Բնորոշ է նաև Ս. Շտիկյանի հաղորդումը «Հայրենիքի ձայն» թերթի 1975 թ. հունվարի 9-ի համարում՝ «Արևմուտքի» նոր համարները» վերնագրով: Ուսումնասիրողներին լավ հայտնի է, որ Ստեփան Ոսկանյանի խմբագրական-հրապարակախոսական գործունեությունն ամբողջացնելու համար լուրջ դժվարություն է հարուցում նաև 1864—1865 թթ. նրա հրատարակած հանդեսի գրեթե ամբողջապես անհայտ մնալը: Իրա համար էլ Ս. Շտիկյանի հաղորդումն այն մասին, որ իրեն են տրամադրվել «Արևմուտքի» 1864—1865 թթ. յոթ համարները (№№ 1—5, 7, 10) կարելի էր սրտանց տղջունել, քանի որ դրանք, ինչպես գրում է հեղինակը, «հնարավորություն են տալիս ավելի ընդլայնել ու խորացնել մեր պատկերացումները Ոսկանյան հրապարակախոսի մասին»:

Բայց այստեղ էլ Ս. Շտիկյանը չի կամեցել նշել, որ իր հաղորդումը տպագրվելուց շատ ամիսներ առաջ, «Պատմա-բանասիրական հանդեսի» 1974 թ. № 3-ում արդեն հրապարակվել էր «Ստեփան Ոսկանյանի «Արևմուտքը» 1864—1865 թվականներին» ընդարձակ նյութը: Նրանում ոչ թե մեկերկու բառով, այլ անոտացիոն-մատենագիտական ընդարձակ տեղեկանք է տրվել «Արևմուտքի» մինչև այդ անհայտ մնացած բոլոր 12 համարներին (№№ 1—12) բոլոր նյութերի մասին՝ համապատասխան նախաբանով:

Բանասեր Ս. Շտիկյանը, նպատակ ունենալով ուսումնասիրել Ստ. Ոսկանյանի կյանքի ու գործունեության առանձին տարեշրջանները, շնորհակալ խնդիր է ստանձնել: Սակայն նա պարտավոր է ամենայն պատասխանատվությամբ ու բարեխղճությամբ վերաբերվել այդ խնդրի իրագործմանը:

¹⁴ Խոսքը Ստ. Ոսկանյանի պամֆլետների մասին է՝ ընդդեմ Գ. Կոստանդյանի և էմիլ Լիթրենի:

¹⁵ «Բաների Հայաստանի արխիվներին», 1971, № 1, էջ 135:

СНОВА О СТЕПАНЕ ВОСКАНЯНЕ

М. Н. АКОПЯН

(Резюме)

В последние годы на страницах научных журналов (*ԳԱ «Լրաբեր», 1969, № 4, 1974, № 4, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 2, 1974, № 1*) и в периодической печати (*«Գրական թերթ», «Հանրահայրի ձայն», «Երեկոցան Երևան»*) появились статьи С. А. Штыкяна, посвященные жизни и деятельности известного общественного деятеля, видного публициста и редактора Степана Восканяна (1825—1901). Поставив перед собой благородную цель—изучить малоизвестные страницы раннего периода жизни и творчества Восканяна, автор, однако, допускает в своих работах серьезные неточности в толковании уже известных фактов, мало заботится об обосновании своих выводов. В данной статье предпринята попытка внести некоторые уточнения, обратить внимание исследователя на ряд фактов и обстоятельств, способствующих правильному освещению и толкованию важных вопросов жизни и деятельности Ст. Восканяна.